



ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ 19(410) «31» հունիսի 2020թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԶՈՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԵՐԸ		
423	«Արցախի Հանրապետության պարետ նշանակելու և Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի ՆՀ-32-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-111-Ն հրամանագիրը.....	4
424	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆՀ-113-Ն հրամանագիրը...	5
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
425	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի N 615-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 219-Ն որոշումը.....	6
426	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 220-Ն որոշումը.....	7
427	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 26-ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 221-Ն որոշումը.....	8
428	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի N 346-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 222-Ն որոշումը.....	9
429	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N 1053-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 227-Ն որոշումը.....	10
430	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 29-ի N 497 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 230-Ն որոշումը.....	11
431	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի N 969-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 231-Ն որոշումը.....	15
432	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 988-Ն որոշման մեջ	

	փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 232-Ն որոշումը.....	16
433	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 238-Ն որոշումը.....	22
434	«Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1160-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 244-Ն որոշումը.....	23
435	«Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 6-ի N 29-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 247-Ն որոշումը.....	25
436	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 30-ի N 467 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 255-Ն որոշումը..	26
437	«Լիազոր մարմին ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 20-ի N 823-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 256-Ն որոշումը.....	28
438	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 712 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 257-Ն որոշումը ..	29
439	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2016 թվականի ապրիլի 29-ի N 203-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 259-Ն որոշումը.....	30
440	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 21-ի N 335-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 261-Ն որոշումը.....	31
441	«Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 1160-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 267-Ն որոշումը.....	32
442	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունիսի 19-ի N 385-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 268-Ն որոշումը.....	44
443	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 6-ի N 743-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 269-Ն որոշումը.....	50
444	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 21-ի N 112-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 270-Ն որոշումը.....	53
445	«Պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցներ սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 271-Ն որոշումը.....	56
446	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013	

	թվականի սեպտեմբերի 12-ի N 608-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 274-Ն որոշումը.....	58
447	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 11-ի N 400 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 275-Ն որոշումը.....	59
448	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 11-ի N 401 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ԱՀ կառավարության N 276-Ն որոշումը.....	60
449	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 283-Ն որոշումը.....	61
450	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 284-Ն որոշումը.....	62
451	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 2-ի N 764-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 285-Ն որոշումը.....	63
ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
452	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու, լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 107 հրամանը.....	64
453	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու, լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 116 հրամանը.....	65
454	ԱՀ ֆինանսների նախարարության կողմից կասեցված լիցենզիաների մասին ցուցակ	67
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ		
455	ԱՀ վերաքննիչ դատարանի քաղաքացիական գործ ԸԻԴ/0004/02/19 որոշումը	68

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԱՐՑԱԽԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ՆՀ-32-Ն
ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ.**

1. Արցախի Հանրապետության պարետ նշանակել Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարար Ժիրայր Միրզոյանին՝ դադարեցնելով Գրիգորի Մարտիրոսյանի՝ որպես Արցախի Հանրապետության պարետի, լիազորությունները:

2. Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի ապրիլի 12-ի «Արցախի Հանրապետությունում արտակարգ իրավիճակ հայտարարելու մասին» ՆՀ-32-Ն հրամանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանագրի 2-րդ կետի «Արցախի Հանրապետության պետական նախարար Գրիգորի Մարտիրոսյանին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարար Ժիրայր Միրզոյանին» բառերով.

2) հրամանագրի 3-րդ կետից հանել «, տարածքային կառավարման և զարգացման» բառերը.

3) հրամանագրի 4-րդ կետի «Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմը» բառերով:

3. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. հուլիսի 27
Ստեփանակերտ
ՆՀ-111-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25-Ի ՆՀ-108-Ն ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի «Արցախի Հանրապետության կառավարության և պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՆՀ-108-Ն հրամանագրի հավելվածի 31-րդ կետի երկրորդ պարբերությունում և 106-րդ կետում «պետական նախարարի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի» բառերով:

2. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2020թ. հուլիսի 28
Ստեփանակերտ
ՆՀ-113-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 հուլիսի 2020թ.

N 219-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 615-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 23-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազգային անվտանգության, ոստիկանության հանրապետական գործադիր մարմինների համակարգերում զինվորական ծառայության պաշտոններ զբաղեցնողների և արտակարգ իրավիճակների պետական ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը և վճարման կարգը սահմանելու մասին» N 615-Ն որոշման N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի (գաղտնի):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 հուլիսի 2020թ.

N 220-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 73-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի «Արցախի Հանրապետության արտակարգ իրավիճակների պետական ծառայության կանոնադրությունը, կառուցվածքը և աշխատողների թիվը հաստատելու ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 29-ի N 344-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 1-ին կետի «522», «449» և «73» թվերը փոխարինել «536», «459» և «77» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 հուլիսի 2020թ.

N 221-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի N 71-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 26-ի «Բնապահպանական փորձաքննություն և լաբորատոր հետազոտություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և «Բնապահպանական փորձաքննություն և լաբորատոր հետազոտություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» N 71-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 5-րդ կետում «բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը» բառերը փոխարինել «բնապահպանության կոմիտեին» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի 8-րդ կետում «Փետրվարի» բառը փոխարինել «Կնունյանցների» բառով, իսկ «20/1» թվերը փոխարինել «28» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 հունիսի 2020թ.

N 222-Ն

ք. Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 11-Ի N 346-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 11-ի «Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու, ««Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու, «Կովսական» պետական արգելոց, «Մոսիների պուրակ» պետական արգելավայր և «Կաչաղակաբերդ» ազգային պարկ ստեղծելու, «Կովսական» պետական արգելոցի, «Մոսիների պուրակ» պետական արգելավայրի և «Կաչաղակաբերդ» ազգային պարկի կանոնադրություններն ու սահմանների հատակագծերը և կոորդինատները հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 1996 թվականի նոյեմբերի 19-ի N 237 որոշումն ուժը կորցրած ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N 1053-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 346-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 5-րդ կետից հանել «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության» բառերը.

2) որոշման 8-րդ կետում «բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը» բառերը փոխարինել «բնապահպանության կոմիտեին» բառերով.

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետում «Հովհաննես Թումանյան փողոցի» բառերը փոխարինել «Մասունցի Դավիթ փողոցի» բառերով, իսկ «117» թիվը՝ «15» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 հունիսի 2020թ.

N 227-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՒՆՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1053-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 1053-Ն որոշմամբ հաստատված հավելվածի աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 1-ին բաժնի 27-րդ կետից հանել «(Կարադաղ լեռ)» բառերը.

2) 1-ին բաժնի 23-րդ, 36-րդ և 38-րդ, 3-րդ բաժնի 54-րդ, 62-րդ, 65-րդ և 71-րդ, 4-րդ բաժնի 73-րդ և 85-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

3) 2-րդ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 40.1-40.4-րդ կետերով.

«	40.1	«Շրշռանի ջրվեժ»	Ասկերանի շրջան, Պատարա գյուղից 1 կմ արևմուտք, Պատարա գետի ձախ վտակի ստորին հոսանքի անտառապատ կիրճում
	40.2	«Խրավանդի ջրվեժ»	Ասկերանի շրջան, Պատարա գյուղից 4 կմ հարավ-արևմուտք՝ Պատարա գետի ձախ անանուն վտակի ստորին հոսանքի անտառապատ կիրճում
	40.3	«Սպիտակաջուրի ջրվեժ»	Քաշաթաղի շրջան, Լեռնահովիտ համայնքի, Շրվական գյուղի տարածքում, Սպիտակաջուր գետակի վրա
	40.4	«Կոմկեռ ջրվեժ»	Շահումյանի շրջան, Դադիվանք և Սուրբ Աստվածածին վանքերի միջև, Տրտու գետի ձախ գառիթափ լանջին

».

4) 2-րդ բաժնի 46-րդ և 47-րդ կետերում «Հոչագ» բառը փոխարինել «Հոչանց» բառով.

5) 3-րդ բաժնի 52-րդ կետում «Թբղլու» բառը փոխարինել «Մարտակերտի շրջան, Թբղլու» բառերով.

6) 3-րդ բաժնի 58-րդ կետում «Դուրխուլի» բառը փոխարինել «Թուրխուն» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 հուլիսի 2020թ.

N 230-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ 29-Ի N 497 ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 29-ի «Ամենամյա երկարացված արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը սահմանելու մասին» N 497 որոշմամբ սահմանված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի հունիսի 20-ի N 230-Ն որոշման

«Հավելված
ԼՂՀ կառավարության
2005թ. նոյեմբերի 29-ի
թիվ 497 որոշման

Ց Ա Ն Կ

**ԵՐԿԱՐԱՑՎԱԾ՝ 25 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ՝ ՀՆԳՕՐՑԱ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԴԵՊՔՈՒՄ, ԵՎ 30 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ՝
ՎԵՑՕՐՑԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ ԴԵՊՔՈՒՄ (ԲԱՑԱՌԻԿ ԴԵՊՔԵՐՈՒՄ՝
35 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ՝ ՀՆԳՕՐՑԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՇԱԲԱԹՎԱ
ԴԵՊՔՈՒՄ ԵՎ 42 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ՝ ՎԵՑՕՐՑԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՇԱԲԱԹՎԱ ԴԵՊՔՈՒՄ) ԱՍԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔ
ՈՒՆԵՑՈՂ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ**

NN ը/կ	Կազմակերպությունները	Հեղօրյա աշխատանքային ռեժիմով աշխատող (աշխատանքային օր)	Վեցօրյա աշխատանքային ռեժիմով աշխատող (աշխատանքային օր)	Կազմակերպություններում աշխատողների պաշտոնների անվանումները
1	2	3	4	5
1	Ուսումնական հաստատություններ, մանկատներ, երեխաների բժշկատոցիալական վերականգնողական հաստատություններ, երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատություններ, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, երեխաների խնամքի ցերեկային հաստատություններ	25	30	ղեկավարներ, նրանց տեղակալներ, ստորաբաժանումների ղեկավարներ
2	Հանրակրթական ուսումնական հաստատություններ	35	42	դասավանդողներ (ուսուցիչ, ուսուցիչ-դաստիարակներ), հոգեբաններ, արատաբաններ, զինվորական ղեկավարներ (զինղեկներ) և երեխաների խնամքի աշխատողներ
3	Հանրակրթական ուսումնական հաստատություններ՝ երեխաների լրացուցիչ ուսման համար	25	30	դասավանդողներ, մասնագետներ՝ ուսուցման մեթոդիկայի և դաստիարակչական աշխատանքների
4	Բարձրագույն ուսումնական հաստատություններ, մանկատներ, երեխաների բժշկատոցիալական վերականգնողական հաստատություններ, երեխաների ժամանակավոր տեղավորման շուրջօրյա հաստատություններ, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ	35	42	դասավանդողներ (ուսուցիչ-դաստիարակներ, ուսուցիչներ, դասախոսներ), հոգեբաններ, արատաբաններ, զինվորական ղեկավարներ (զինղեկներ) և երեխաների խնամքի աշխատողներ

	հաստատություններ, երեխաների խնամքի ցերեկային հաստատություններ			
5	Արտադպրոցական կրթադաստիարակչական ուսումնական հաստատություններ	25	30	դասավանդողներ, մասնագետներ՝ ուսուցման մեթոդիկայի և դաստիարակչական աշխատանքների
6	Միջին և նախնական մասնագիտական հաստատություններ (քոլեջ, վարժարան, արհեստագործական ուսումնարան)	35	42	դասավանդողներ, մասնագետներ՝ ուսուցման մեթոդիկայի և դաստիարակչական աշխատանքների
7	Արտադրական հիգիենայի, ճառագայթային հիգիենայի, կոմունալ հիգիենայի բաժանմունքներ և բաժիններ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
8	Համաճարակաբանական, մանրէաբանական, վիրուսաբանական կազմակերպություններ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
9	Ռենտգենյան, բժշկական ռադիոլոգիական (բոլոր պրոֆիլների) բաժիններ, բաժանմունքներ, կաբինետներ	35	42	բժիշկներ, բժիշկ-ֆիզիկոսներ, ճարտարագետներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
10	Մաշկավեներաբանական հիվանդանոցներ, բաժանմունքներ, կաբինետներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
11	Տուբերկուլոզային և հակատուբերկուլոզային հիվանդանոցներ, դիսպանսերներ, կաբինետներ, առողջարաններ	35	42	բժիշկներ, բուժքույրեր, անձնակազմ միջին բժշկական, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
12	Հոգեբուժական, հոգեկորոզիական բաժանմունքներ, կաբինետներ	35	42	բժիշկներ, բուժքույրեր, անձնակազմ միջին բժշկական, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
13	Դատաբժշկական փորձագիտական կազմակերպություններ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
14	Ախտաբանաանատոմիական կազմակերպություններ, բաժանմունքներ, կաբինետներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
15	Ֆիզիոթերապևտիկ բաժանմունքներ, կաբինետներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
16	Անեսթեզիոլոգիայի և վերականգնման, ինտենսիվ թերապիայի բաժանմունքներ, հիվանդասենյակներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
17	Թարախային բարդությունների համար նախատեսված բաժանմունքներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
18	Լաբորատորիաներ (բաժիններ, բաժանմունքներ, կլինիկական, սերոլոգիական, մանրէաբանական, կենսաքիմիական)	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ, անձնակազմ միջին բժշկական
19	Քիմիոթերապևտիկ, լազերային, համակարգչային բաժանմունքներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական

				ծառայություններ մատուցող աշխատողներ
20	Ստորգետնյա առողջապահական կազմակերպություններ, հանքաբուժարաններ, բաժանմունքներ, կաբինետներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
21	Կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ախտահարումներ (անդամալուծություն, կաթված, խուլ-համրություն, տետղական և խոսակցական ֆունկցիայի խանգարում) ունեցողների հիվանդանոցներ, բաժանմունքներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
22	Հոգեկան և տարափոխիկ հիվանդների շտապ և անհետաձգելի բուժօգնություն ապահովող բրիգադներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ, սանիտարի պարտականությամբ վարորդներ
23	Հոգեբուժական (հոգեկարգաբանական) բուժկանխարգելիչ կազմակերպություններ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
24	Հոգեկան հիվանդների համար գիշերօթիկ տներ, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ	35	42	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
25	Հատուկ վտանգավոր վարակիչ հիվանդությունների կանխարգելման կազմակերպություններ, բաժանմունքներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
26	Սանիտարական խարգելիչ (ինֆեկցիոն օջախներն ախտահանող) կազմակերպություններ, բաժանմունքներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
27	ՄԻԱՎ-ՁԻԱՀ կազմակերպություններ, հիվանդանոցներ, բաժանմունքներ, լաբորատորիաներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
28	Տարափոխիկ հիվանդությունների բաժանմունքներ, կաբինետներ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ
29	Նարկոլոգիական կազմակերպություններ	25	30	բժիշկներ, բուժքույրեր, խնամյալներին անհատական ծառայություններ մատուցող աշխատողներ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

20 հուլիսի 2020թ.

N 231-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 969-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 28-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչությունը Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության սոցիալական ապահովության պետական գործակալության վերակազմակերպելու և գործակալության կանոնադրությունն ու կառուցվածքը հաստատելու մասին» N 969-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, որոշմամբ հաստատված N N 1, 2 հավելվածների վերնագրերում «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ» բառերը փոխարինել «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ» բառերով.

2) որոշման 1-4-րդ կետերում, որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 1-2-րդ կետերում, 6-րդ կետի 1-ին ենթակետում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի» բառերով.

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ուսերեն լրիվ Государственное агентство социального обеспечения министерства труда, социальных и жилищных вопросов Республики Арцах:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

21 հուլիսի 2020թ.

N 232-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 988-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին» N 988-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, որոշման 1-ին կետում «վերակազմավորել» բառից հետո և որոշման 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով.

2) որոշման նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հիմք ընդունելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը, 11-րդ հոդվածի 1-ին կետի «Ժգ» ենթակետը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**».

3) որոշմամբ հաստատված N 1 և N 2 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱՊԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ
ԵՎ ՆՈՏԱՐԻԱՏԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի գործակալությունը (այսուհետ՝ գործակալություն) նախարարության աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, մատուցում է ծառայություններ քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարիատի բնագավառներում՝ հանդես գալով Արցախի Հանրապետության անունից:

2. Գործակալությունն ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ:

3. Գործակալությունը գործում է իր կանոնադրության համաձայն, որն Արցախի Հանրապետության արդարադատության նախարարի (այսուհետ՝ նախարար) ներկայացմամբ, հաստատում է Արցախի Հանրապետության կառավարությունը:

4. Գործակալության լիազորությունները սահմանվում են Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով:

5. Գործակալության գործունեությունն իրականացվում է Արցախի Հանրապետության Սահմանադրությանը, Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերին, Ընտանեկան օրենսգրքին, Քաղաքացիական օրենսգրքին, «Քաղաքացիական կացության ակտերի մասին», «Նոտարիատի մասին» օրենքներին, այլ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերին համապատասխան:

6. Գործակալությունն օրենքով կամ իրավական այլ ակտերով նախատեսված դեպքերում իրավունք ունի Արցախի Հանրապետության անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող:

7. Գործակալության կենտրոնական մարմինը և քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային ստորաբաժանումներն ունեն Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց՝ հայերեն անվանմամբ կլոր կնիքներ, ձևաթղթեր, կարող են ունենալ խորհրդանիշներ և անհատականացման այլ միջոցներ: Գործակալության կառուցվածքային ստորաբաժանումն ունի ձևաթղթեր, կարող է ունենալ խորհրդանիշներ և անհատականացման այլ միջոցներ: Նոտարական գրասենյակներն ունեն Արցախի Հանրապետության զինանշանի պատկերով և իրենց՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն անվանմամբ կլոր կնիքներ, ձևաթղթեր, կարող են ունենալ խորհրդանիշներ և անհատականացման այլ միջոցներ:

2. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

8. Գործակալության նպատակներն ու խնդիրներն են՝

1) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ապահովումը.

2) քաղաքացիական կացության ակտերի գրանցման արխիվի կազմակերպումը.

3) քաղաքացիական կացության ակտերի գրանցման ավտոմատացված տեղեկատվական բազայի ձևավորման ապահովումը.

4) նոտարական գրասենյակների աշխատանքների կազմակերպումը:

3. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՑՆԵՐԸ

9. Գործակալության համակարգը կազմված է կենտրոնական մարմնից, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներից: Գործակալության կենտրոնական մարմինը կազմված է գործակալության պետից և գործակալության կենտրոնական մարմնի աշխատողներից: Գործակալության կառուցվածքային ստորաբաժանումը բաժնի կարգավիճակ ունեցող՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման հանրապետական արխիվն է: Գործակալության տարածքային ստորաբաժանումները՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժիններն են և նոտարական գրասենյակները:

10. Գործակալությունն իր նպատակների և խնդիրների իրականացման՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառնություններն իրականացնում է կենտրոնական մարմնի, կառուցվածքային ու տարածքային ստորաբաժանումների միջոցով:

11. Գործակալության կենտրոնական մարմինը՝

1) կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման գործընթացը և նոտարական գրասենյակների աշխատանքը.

2) կազմակերպում և ամփոփում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարական գործունեության վիճակագրությունը և դրա մասին ներկայացնում տեղեկատվություն.

3) կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման արխիվային փաստաթղթերի պահպանությունը, համալրումը, հաշվառումը և օգտագործումը.

4) իրականացնում է գործակալության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատանքային գործունեության ուսումնասիրությունը, ղեկավարումը, համակարգումը և հսկողությունը.

5) ուսումնասիրում է գործակալության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների դեմ ուղղված բողոքները.

6) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների սահմաններում իրականացնում է Արցախի Հանրապետության միջազգային պայմանագրերի կատարման հետ կապված լիազորություններ.

7) Արցախի Հանրապետության կառավարության կողմից հաստատված վճարովի ծառայությունների ցանկին և վճարների չափերին համապատասխան մատուցում է ծառայություններ.

8) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառնություններ:

12. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման հանրապետական արխիվը՝

1) սահմանված կարգով ապահովում է արխիվ հանձնված փաստաթղթերի հաշվառումը և սահմանված ժամկետում պահպանումը, կատարում է արխիվային փաստաթղթերի փորձագիտական արժեքավորումը, ստեղծում և կատարելագործում է արխիվի գիտատեղեկատու համակարգը, վարում է արխիվային ֆոնդի, գործերի և փաստաթղթերի հաշվառումը.

2) սահմանված կարգով արխիվային փաստաթղթերը տրամադրում է ժամանակավոր օգտագործման.

3) արխիվային փաստաթղթերի վերաբերյալ պատրաստում է վերլուծական և տեղեկատվական նյութեր.

4) պահպանում է պետական, ծառայողական և անձնական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ պարունակող փաստաթղթերի պահպանության և օգտագործման հատուկ ռեժիմը.

5) մեթոդական և գործնական օգնություն է ցույց տալիս քաղաքացիական կացության ակտերի գրանցման՝ բաժիններին արխիվ հանձնման ենթակա փաստաթղթերի հետ տարվող աշխատանքներում.

6) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառնություններ:

4. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13. Գործակալությունը կառավարում է նախարարը: Գործակալության անմիջական ղեկավարումն իրականացնում է գործակալության պետը, որը պաշտոնի է նշանակվում և պաշտոնից ազատվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով:

14. Գործակալության պետը հաշվետու է նախարարին, գործակալության գործունեությունը համակարգող նախարարի տեղակալին (այսուհետ՝ տեղակալ), իսկ քաղաքացիական ծառայության մասին Արցախի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև նախարարության աշխատակազմի ղեկավարին:

15. Գործակալության պետը՝

1) ղեկավարում է գործակալության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է գործակալության առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման համար.

2) նախարարին կամ տեղակալին ներկայացնում է առաջարկություններ օրենքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառների, նպատակների ու խնդիրների վերաբերյալ.

3) իր իրավասության սահմաններում արձակում է կարգադրություններ և տալիս ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Արցախի Հանրապետության և գործակալության անունից, ինչպես նաև տալիս է գործակալության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ նաև վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) իր իրավասության սահմաններում նախարարին և նախարարության աշխատակազմի ղեկավարին ներկայացնում է առաջարկություններ գործակալության համապատասխան աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցների կիրառման, ինչպես նաև դասային աստիճան շնորհելու վերաբերյալ.

5) նախարարին կամ տեղակալին պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն գործակալության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին.

6) ապահովում է նախարարի հրամանների և ցուցումների, ինչպես նաև տեղակալի ցուցումների, հանձնարարականների ու առաջադրանքների կատարումը և արդյունքների մասին տեղեկացնում նախարարին կամ տեղակալին.

7) կատարում է աշխատանքի բաշխում գործակալության կենտրոնական մարմնի աշխատողների միջև.

8) լսում է գործակալության կենտրոնական մարմնի աշխատողների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության ստուգման արդյունքները.

9) իրականացնում է հսկողություն գործակալության կենտրոնական մարմնի, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների օգտագործմանը հանձնված պետական սեփականության պահպանության նկատմամբ.

10) նախարարին ներկայացնում է առաջարկություններ գործակալության կառուցվածքի և աշխատողների թվի, ինչպես նաև գործակալության խորհրդակցական մարմինների ստեղծման վերաբերյալ.

11) իր լիազորության սահմաններում համագործակցում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ.

12) ստորագրում և կնքում է գործակալության անունից պատրաստվող փաստաթղթերը.

13) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

16. Գործակալության պետի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունների կատարման անհնարինության դեպքում գործակալության պետի պարտականությունների կատարման հարցը կարգավորվում է «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

17. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման հանրապետական արխիվի պետը՝

1) կազմակերպում է բաժնի աշխատանքները.

2) վարում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման արխիվը.

3) իրականացնում է հսկողություն բաժնի աշխատողների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման, պաշտոնեական պարտականությունների ժամանակին և օրենքի պահանջներին համապատասխան կատարման նկատմամբ.

4) իր իրավասության սահմաններում կատարում է գործակալության պետի հանձնարարականներն ու գրավոր ցուցումները.

5) կրում է պատասխանատվություն բաժնի խնդիրների իրականացման համար.

6) ստորագրում է բաժնի անունից պատրաստվող փաստաթղթերը.

7) իր իրավասության սահմաններում բաժնի աշխատողներին տալիս է ցուցումներ, աշխատողների միջև բաշխում է պարտականությունները.

8) իր իրավասության սահմաններում ապահովում է բաժնի և այլ մարմինների փոխհարաբերությունները:

9) իր իրավասության սահմաններում այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է բաժնի գործունեությանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր:

10) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

18. Գործակալության տարածքային ստորաբաժանման ղեկավարը՝

1) կազմակերպում է համապատասխան տարածքային ստորաբաժանման աշխատանքները:

2) իրականացնում է հսկողություն տարածքային ստորաբաժանման աշխատողների կողմից աշխատանքային կարգապահության պահպանման, պաշտոնեական պարտականությունների ժամանակին և օրենքի պահանջների համապատասխան կատարման նկատմամբ:

3) իր իրավասության սահմաններում իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ կամ նոտարական գործողություններ և այլ գործունեություն:

4) վարում է տարածքային ստորաբաժանման արխիվը:

5) սահմանված կարգով տրամադրում է տեղեկատվություն կատարված գործունեության վերաբերյալ:

6) իր իրավասության սահմաններում կատարում է գործակալության պետի հանձնարարականներն ու գրավոր ցուցումները:

7) կրում է պատասխանատվություն տարածքային ստորաբաժանման խնդիրների իրականացման համար:

8) ստորագրում և կնքում է տարածքային ստորաբաժանման անունից պատրաստվող փաստաթղթերը:

9) իր իրավասության սահմաններում տարածքային ստորաբաժանման աշխատողներին տալիս է ցուցումներ, աշխատողների միջև բաշխում է պարտականությունները:

10) իր իրավասության սահմաններում ապահովում է տարածքային ստորաբաժանման և այլ մարմինների փոխհարաբերությունները:

11) իր իրավասության սահմաններում այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանում է տարածքային ստորաբաժանման գործունեությանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր:

12) իրականացնում է Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ:

19. Գործակալության տարածքային ստորաբաժանումները մատուցում են վճարովի ծառայություններ:

5. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

20. Արցախի Հանրապետության օրենսդրությամբ գործակալությանը վերապահված լիազորությունների լիարժեք ու արդյունավետ իրականացումը, ինչպես նաև քաղաքացիական իրավահարաբերություններին նրա մասնակցությունն ապահովում է նախարարության աշխատակազմը:

21. Գործակալության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների (բացառությամբ պետական նոտարական գրասենյակների) աշխատողները քաղաքացիական ծառայողներ են: Նոտարի և նոտարական գրասենյակի այլ աշխատողների իրավական կարգավիճակի առանձնահատկությունները սահմանվում են «Նոտարիատի մասին» օրենքով:

Կ Ա Ռ ՈՒ Ց Վ Ա Ծ Ք
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԻ
ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՆՈՏԱՐԻԱՏԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

1. Կենտրոնական մարմին

2. Կառուցվածքային ստորաբաժանում

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման հանրապետական արխիվ

3. Տարածքային ստորաբաժանումներ

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ստեփանակերտի բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ասկերանի բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Մարտակերտի բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Մարտունու բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Հաղրութի բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Շուշիի բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Շահումյանի բաժին
Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Քաշաթաղի բաժին
Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 1 նոտարական գրասենյակ
Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 2 նոտարական գրասենյակ
Ասկերան նոտարական տարածքի նոտարական գրասենյակ
Մարտակերտ նոտարական տարածքի նոտարական գրասենյակ
Մարտունի նոտարական տարածքի նոտարական գրասենյակ
Հաղրութ նոտարական տարածքի նոտարական գրասենյակ
Շուշի նոտարական տարածքի նոտարական գրասենյակ
Շահումյան նոտարական տարածքի նոտարական գրասենյակ
Քաշաթաղ նոտարական տարածքի նոտարական գրասենյակ»:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

22 հունիսի 2020թ.

N 238-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 463 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Շոշի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ անտառային նպատակային նշանակության 4,17 հեկտար անտառը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

24 հուլիսի 2020թ.

N 244-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 27-ի «Արցախի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1160-Ն որոշմամբ սահմանված N 2 հավելվածի առաջին աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2020 թվականի հուլիսի 20-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՍԱՄԻՆ» ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՄԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1160-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ԱՂՅՈՒՄԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Իննամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱՌՄԵՐ այդ թվում՝	-	-	-	-
07			ԱՌՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	-	-
	1		Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	-	-	(15 000,0)	(15 000,0)
		3	Բժշկական սարքեր և սարքավորումներ	-	-	(15 000,0)	(15 000,0)
		01	Կենտրոնացված կարգով բժշկական սարքավորումների և պարագաների ձեռքբերում	-	-	(15 000,0)	(15 000,0)
			ԱՀ առողջապահության նախարարություն			(15 000,0)	(15 000,0)
	6		Առողջապահություն (այլ դասերին չչափված)	-	-	15 000,0	15 000,0
		1	Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	-	-	6 249,0	6 249,0
		09	Փորձի փոխանակման նպատակով հրավիրված և ուղեգրված մասնագետներին տրամադրվող փոխհատուցում	-	-	6 249,0	6 249,0
			ԱՀ առողջապահության նախարարություն	-	-	6 249,0	6 249,0
		2	Առողջապահություն (այլ դասերին չչափված)	-	-	8 751,0	8 751,0
		01	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում		-	8 751,0	8 751,0
			ԱՀ առողջապահության նախարարություն	-		8 751,0	8 751,0

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

24 հունիսի 2020թ.

N 247-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի N 29-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Արցախի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 6-ի «Արցախի Հանրապետության Նախագահի 2020 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի մասին» N 29-Ն որոշման հավելվածի

1) 101-րդ կետի 4-րդ պունակում «Երկրորդ եռամսյակ» բառերը փոխարինել «Չորրորդ եռամսյակ» բառերով.

2) 102-104-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2020թ.

N 255-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 467 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 30-ի «Բարեգործական ծրագրերի մասին» N 467 որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 3¹-ին կետում, որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 5-6-րդ կետերում «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի» բառերով.

2) որոշմամբ հաստատված թիվ 2 հավելվածի 24-րդ կետում «Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե» բառերով, իսկ «հարկային տեսչություն» բառերը՝ «հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանում» բառերով.

3) որոշմամբ հաստատված թիվ 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի հուլիսի 27-ի N 255-Ն որոշման

«Հավելված թիվ 3
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2007 թվականի
հոկտեմբերի 30-ի N 467 որոշման

Կ Ա Ձ Մ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարար (հանձնաժողովի նախագահ)

Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարի առաջին տեղակալ (հանձնաժողովի նախագահի տեղակալ)

Արցախի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ

Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ

Արցախի Հանրապետության կրթության, գիտության և մշակույթի նախարարի տեղակալ

Արցախի Հանրապետության ռազմահայրենասիրության, երիտասարդության, սպորտի և զբոսաշրջության նախարարի տեղակալ

Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարի տեղակալ

Արցախի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ

Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետի տեղակալ

Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և բնակարանային հարցերի նախարարության աշխատակազմի բարեգործական ծրագրերի համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար):»:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐՉՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2020թ.

N 256-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ
20-Ի N 823-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Անտառային օրենսգրքի 7-րդ հոդվածը, Արցախի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի դրույթները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ք ո շ ու մ է.**

1. Անտառների կայուն կառավարման ոլորտում պետական կառավարման լիազոր մարմին ճանաչել Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը:

2. Ընդերքի օգտագործման և պահպանության բնագավառում լիազոր մարմին ճանաչել Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 20-ի «Լիազոր պետական մարմին ճանաչելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 23-ի N 904 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 823-Ն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2020թ.

N 257-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 712 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի դրույթները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N 712 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 5-րդ կետում «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը» բառերով.

2) որոշման հավելվածի՝

ա. 13-րդ կետում «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարությունը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը» բառերով,

բ. 17-րդ կետում «Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

27 հուլիսի 2020թ.

N 259-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N 203-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

15	ԱՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ	9.60	
16	ԱՀ Նախագահի գլխավոր խորհրդական-հատուկ հանձնարարություններով ղեկավար	9.60	
17	ԱՀ Նախագահի գլխավոր խորհրդական	9.60	
18	ԱՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ	8.00	Ուժի մեջ է մտնում 2020 թվականի օգոստոսի 1-ից
19	Խորհրդատու	5.80	
	ԱՀ պետական վերահսկողական ծառայություն		
20	ԱՀ պետական վերահսկողական ծառայության պետի օգնական	2.50	

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 հուլիսի 2020թ.

N 274-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2013 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 608-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի «Իրավաբանական անձանց պետական գրանցման և քաղաքացիական կացության ակտերի գրանցման վճարովի ծառայությունների ցանկը և վճարների չափերը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարությանն արտաբյուջետային հաշիվ բացելու թույլտվություն տալու մասին» N 608-Ն որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի 16-րդ կետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 հուլիսի 2020թ.

N 275-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 400 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 11-ի «Անվան փոխման կարգն ու պայմանները հաստատելու մասին» N 400 որոշման (այսուհետ նաև՝ որոշում) մեջ և հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, տեքստում «հաստատել» բառը և դրա հոլովածները փոխարինել «սահմանել» բառով և դրա հոլովածներով.

2) որոշման տեքստից և հավելվածից «օրենքի» բառից առաջ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել.

3) որոշման հավելվածի՝

ա. 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2. Անվան փոխման համար անունը փոխել ցանկացող չափահաս անձն անձամբ դիմում է քաղաքացիական կացության գրանցման (այսուհետ՝ ՔԿԱԳ) մարմին:»,

բ. 5-րդ կետն ուժը կորցրած ճանաչել,

գ. ամբողջ տեքստում «ՔԿԱԳ-ի տարածքային մարմին» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «ՔԿԱԳ մարմին» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով,

դ. 7-րդ, 12-րդ, 15-18-րդ և 22-րդ կետերի «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով, իսկ 25-րդ կետի «Լեռնային Ղարաբաղի» բառերը «Արցախի Հանրապետության» բառերով:

2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

29 հուլիսի 2020թ.

N 276-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի N 401 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 11-ի «Քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնման կարգը սահմանելու մասին» N 401 որոշման (այսուհետ նաև՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) որոշման տեքստից «օրենքի» բառից առաջ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը հանել, իսկ «հաստատել» բառը փոխարինել «սահմանել» բառով.

2) որոշման հավելվածի՝

ա. 6-րդ կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Դիմումը կարող է ներկայացնել սույն կետում նշված անձի կողմից Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորված անձը:»,

բ. ամբողջ տեքստում «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2020թ.

N 283-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 465 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խնապատի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 4,35 հեկտար արոտավայրը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության՝ ընդերքի օգտագործման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 հուլիսի 2020թ.

N 284-Ն

ք. Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 384 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Քոասնիի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող քաղաքացու սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,12 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Քոասնիի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 հունիսի 2020թ.

N 285-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՑԵՄԲԵՐԻ 2-Ի N 764-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 2-ի ««Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված՝ պետական կառավարման լիազորված մարմնի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 30-ի N 455 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 764-Ն որոշման 1-ին կետում «Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությանը» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության կադաստրի և պետական գույքի կառավարման կոմիտեին» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«20» հուլիսի 2020թ.

N 107

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ
ԱՎՏՈՄՈՒԲԻԼՆԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ
ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2020 թվականի հուլիսի 17-ի N361-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝

1) **Ֆիզիկական անձ Սևադա Էդիկի Խաչատրյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00754 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

2) **անհատ ձեռնարկատեր Մանվել Գենադիի Թովմասյանին** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով միջպետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՄՊՏՈՆ00755 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

2. Դադարեցնել՝

1) **Ֆիզիկական անձ Էրիկ Էդուարդի Բաղդասարյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ000603 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

2) **Ֆիզիկական անձ Հենրիկ Յուրիի Ղուկասյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՏՈՆ00713 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները:

3. Ենթյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմնին:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«28» հուլիսի 2020թ.

N 116

ք.Ստեփանակերտ

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՄԻ
ԱԿՏՈՍՈՒԲԻԼԵՐՈՎ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և
հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական
ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլ-
ներով միջպետական և ներհանրապետական ուղևորափոխադրումների
կազմակերպման գործունեության լիցենզավորող հանձնաժողովի 2020
թվականի հուլիսի 27-ի N362-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝

1) **Ֆիզիկական անձ Սասուն Կարենի Աղաջանյանին** Արցախի
Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապե-
տական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության
ՏՈՆ00756 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

2) **անհատ ձեռնարկատեր Արմեն Վազգենի Բարսեղյանին** Արցախի
Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով միջպետական
ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության ՄՊՏՈՆ00757
լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

3) **անհատ ձեռնարկատեր Արթուր Ալվրեժի Պետրոսյանին** Արցախի
Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրա-
պետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության
ՏՈՆ00218 լիցենզիայի N00003 ներդիր.

4) **անհատ ձեռնարկատեր Մարատ Կամոյի Հայրապետյանին** Արցախի
Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրա-
պետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության
ՏՈՆ00275 լիցենզիայի N00004 ներդիր.

5) **Ֆիզիկական անձ Վարդան Արարատի Միքայելյանին** Արցախի
Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրա-
պետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության
ՏՈՆ00458 լիցենզիայի N00005 ներդիր.

6) **անհատ ձեռնարկատեր Վասիլի Միքայելի Մայիլյանին** Արցախի
Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապե-
տական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության
ՏՈՆ00542 լիցենզիայի N00002 ներդիր:

2. Դադարեցնել՝

1) **անհատ ձեռնարկատեր Ալեքսանդր Արտաշեսի Մկրտչյանի** Արցախի
Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապե-
տական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության
ՏՈՆ000394 լիցենզիայի գործողությունը.

2) **անհատ ձեռնարկատեր Արմեն Վազգենի Բարսեղյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SՏՈՆ000560 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

3) **ֆիզիկական անձ Արթուր Հրաչիկի Մարտիրոսովի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SՏՈՆ000695 լիցենզիայի և լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունները.

4) **անհատ ձեռնարկատեր Արթուր Ալվրեժի Պետրոսյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SՏՈՆ00218 լիցենզիայի N00002 ներդիրի գործողությունը.

5) **անհատ ձեռնարկատեր Մարատ Կամոյի Հայրապետյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SՏՈՆ00275 լիցենզիայի N00003 ներդիրի գործողությունը.

6) **ֆիզիկական անձ Վարդան Արարատի Միքայելյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SՏՈՆ00458 լիցենզիայի N00004 ներդիրի գործողությունը.

7) **անհատ ձեռնարկատեր Վասիլի Միքայելի Մայիլյանի** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության SՏՈՆ00542 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը պաշտոնական տեղեկագիրը հրապարակող մարմինն:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Յ Ո Ւ Ց Ա Կ

ԱՀ ֆինանսների նախարարության կողմից «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն կասեցված լիցենզիաների

ՀՀ	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի, թույլտվության, արտոնագրի			
	անվանումը	ՀՎՀՀ	սերի-ան	հա-մարը	գործունեության տեսակը	կասեցման ամսաթիվը
1	«Միկա-Հադրուլ» ՓԲԸ	90281869	ՊԼ	65	Գինու, խնձորի և պտղահատապտղային այլ գինիների արտադրություն	21.06.2020
2	«ԲԻԷՅՁ ԲՐԵՆԴԻ ՔՈՄՓԱՆԻ» ՓԲԸ	90022272	ՊԼ	334	Թորած ալկոհոլային խմիչքների (բացառությամբ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220870 ծածկագրին դասվող լիկյորների և 220890 ծածկագրին դասվող, մինչև 9 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների, ինչպես նաև 2208 ծածկագրին դասվող միայն պտուղներից և հատապտուղներից թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների) և խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրություն	22.06.2020

բողոքը վերադարձվել է և սահմանվել երկշաբաթյա ժամկետ՝ բողոքում թույլ տրված խախտումները վերացնելու և վերաքննիչ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Պատասխանողը, վերացնելով որոշմամբ արձանագրված խախտումները, 2019 թվականի հուլիսի 22-ին կրկին վերաքննիչ բողոք է ներկայացրել:

Վերաքննիչ դատարանի 2019 թվականի հուլիսի 23-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

Վերաքննիչ դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 25-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն. Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի հունիսի 04-ի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ լրիվ ծավալով նոր քննության:

Նշված որոշման դեմ 2019 թվականի հոկտեմբերի 23-ին վճռաբեկ բողոք են ներկայացրել Հայցվորն ու նրա ներկայացուցիչ Վ. Հայրապետյանը:

Գերագույն դատարանի 2019 թվականի նոյեմբերի 07-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

Առաջին ատյանի դատարանի 2019 թվականի նոյեմբերի 08-ի որոշմամբ քաղաքացիական գործն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի փետրվարի 25-ի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն. անչափահաս Հարույթ Վաչագան Բաբայանի օրինական ներկայացուցիչ Վաչագան Ջոհրաբի Բաբայանից հոգուտ Արթուր Վյաչեսլավի Բալայանի բռնագանձվել է 920.950 (ինը հարյուր քսան հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ որպես տասնչորս տարեկան չդարձած անչափահասի (փոքրահասակի) կողմից պատճառված վնասի գումար, մնացած՝ 920.950 (ինը հարյուր քսան հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամի մասով պահանջը մերժվել է:

Նշված վճռի դեմ 2020 թվականի մարտի 23-ին վերաքննիչ բողոք է բերել Պատասխանողը:

Վերաքննիչ դատարանի 2020 թվականի մարտի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատաքննության:

Վերաքննիչ դատարանի 2020 թվականի մայիսի 06-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը բավարարվել է: Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի փետրվարի 25-ի վճիռը մասնակիորեն հայցը մասնակիորեն բավարարելու մասով, բեկանվել է և այդ մասով հայցապահանջը մերժվել:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2020 թվականի հունիսի 05-ին վճռաբեկ բողոք են ներկայացրել Հայցվորն ու նրա ներկայացուցիչ Վ. Հայրապետյանը:

Գերագույն դատարանի 2020 թվականի հունիսի 24-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Մույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Ըստ բողոքաբերների՝ Վերաքննիչ դատարանն առերևույթ խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 45-րդ, 47-րդ, 49-րդ, 229-րդ և 231-րդ հոդվածների, ինչպես նաև ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ, 1061-րդ, 1070-րդ հոդվածների պահանջները:

Նման դիրքորոշումը բողոքաբերները հիմնավորել են հետևյալ փաստարկներով.

Ըստ բողոքաբերների՝ Հայցվորն Առաջին ատյանի դատարանում ցուցմունք է տվել գործի փաստերի վերաբերյալ, հիմնավորել, թե ինչու է գտել, որ Պատասխանողի երեխայի գործողությունների արդյունքում է իրեն վնաս պատճառվել, ինչպես նաև հիմնավորել է վնասի չափը: Ընդ որում, Հայցվորն իր տիրապետման ներքո գտնված բոլոր ապացույցները ներկայացրել է նախքան դատաքննությունը սկսելը:

Իր հերթին, Պատասխանողը՝ քաջատեղյակ լինելով նախնական դատական նիստի մասին, փաստաբան ներկայացուցիչ ունենալով, որևէ գրավոր ապացույց և /կամ/ ապացույց պահանջելու վերաբերյալ միջնորդություն չի ներկայացրել նախնական դատական նիստի ընթացքում, չի ներկայացրել անգամ նախքան հիմնական դատաքննությունը սկսելը: Ավելին, իր առարկությունները հիմնավորելու համար, անգամ, չի միջնորդել դատաքննության ժամանակ լսել վկայի ցուցմունք: Իսկ դատավարության հետագա փուլում՝ դատաքննությունը սկսելուց հետո, նման միջնորդությունն իրավացիորեն մերժվել է Առաջին ատյանի դատարանի կողմից:

Պատասխանողը չի ապացուցել պատճառված վնասի հարցում իր երեխայի մեղքի բացակայությունը, այն դեպքում, երբ այդ փաստի ապացուցման բեռը կրում էր հենց ինքը, իսկ Հայցվորն էլ իր կրած վնասում պատասխանող կողմի մեղավորությունն ապացուցել է նաև հենց Պատասխանողի դիրքորոշումներով՝ ցուցմունքներով և առաջադրված հարցերին նրա կողմից տրված պատասխաններով:

Պատասխանողը թեև առարկել է հայցի բավարարման դեմ, սակայն իր ցուցմունքով հայտնել է, որ երբ երեխան լացում էր՝ տեսախցիկն ընկած էր գետնին, ինչն էլ իրեն հիմք է տվել մտածելու, որ իր երեխան է հարվածել տեսախցիկին, այդ պատճառով էլ Հայցվորին առաջարկել է քննարկել առաջացած վնասի փոխհատուցման հարցը: Ըստ Պատասխանողի՝ երեխան լացում էր, քանի որ թեթև վնաս-ֆիզիկական ցավ է զգացել տեսախցիկին հարվածելու արդյունքում: Պատասխանողի այդ դիրքորոշումներից էլնելով էլ՝ Առաջին ատյանի դատարանը ճիշտ հետևության է հանգել ու հաստատված համարել այն փաստը, որ Պատասխանողի երեխայի գործողությունների արդյունքում է տեսախցիկը վայր ընկել և վնասվել:

Հետևաբար, Առաջին ատյանի դատարանը ճիշտ է պատճառաբանել դատական ակտը, որի փաստաիրավական հիմնավորումներն ակնհայտ վկայում են հիմնավոր դատական ակտի առկայության մասին, և որով բացառված է Առաջին ատյանի դատարանի կողմից որևէ նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտում թույլ տված լինելը: Ուստի, եթե անգամ համարվի, թե գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա Վերաքննիչ դատարանը կարող էր պատճառաբանել անփոփոխ թողնված դատական ակտը:

Բողոքաբերների կարծիքով՝ վերը նշված պատճառաբանությունները վկայում են այն մասին, որ Վերաքննիչ դատարանը վերաքննության սահմանազանցման արդյունքում անտեղի բեկանել է ըստ էության ճիշտ ելքով դատական ակտը, որով իսկ թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի առերևույթ խախտումներ, որոնք էլ իրենց հերթին հանգեցրել են գործի սխալ լուծմանը:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը բողոքաբերները հիմնավորել են նրանով, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար, և ստորադաս դատարանի կողմից առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ (ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդված):

Վերոգրյալի հիման վրա՝ բողոքաբերները խնդրել են բեկանել ԸԻԴ/0004/02/19 քաղաքացիական գործով Վերաքննիչ դատարանի 2020 թվականի մայիսի 06-ի կայացրած որոշումը՝ ուժի մեջ թողնելով Առաջին ատյանի դատարանի 2020 թվականի փետրվարի 25-ի վճիռը:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1/ Պատասխանողը հանդիսանում է 07.03.2015թ. ծնված Հարութ

Վաչագան Բաբայանի ծնողը:

2/ 05.08.2018թ. Մարտունու շրջանի Աշան համայնքում տեղի ունեցած հարսանեկան արարողության ժամանակ Հայցվորի կողմից իր սեփական «Սոնի» (SONY) ապրանքանիշի տեսախցիկով (այսուհետ, նաև՝ Տեսախցիկ) աշխատանքային պարտականությունները կատարելու ընթացքում, վերջինիս կողմից կարճ ժամանակահատվածում հեռանալուց հետո, կանգնակների վրա տեղադրված տեսախցիկն ընկել է և վնասվել:

3/ «Դատական փորձաքննությունների լաբորատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի դեկտեմբերի 06-ի թիվ 43216.18 փորձագիտական եզրակացության /այսուհետ, նաև՝ Եզրակացություն/ համաձայն՝ Տեսախցիկին պատճառված վնասի չափը փորձաքննության իրականացման պահին կազմել է 970.000 /ինը հարյուր յոթանասուն հազար/ ՀՀ դրամ /հ.1, գ/թ.18-19/:

4/ Համաձայն Պատասխանողի՝ դատաքննության ժամանակ տված ցուցմունքի՝ Տեսախցիկն ընկնելու հարցում իր երեխան մեղք չունի, քանի որ ոչ ոք չի տեսել երեխային Տեսախցիկը հրելուց, իսկ իր կողմից դեպքից անմիջապես հետո վնասը հատուցելու վերաբերյալ պատրաստակամություն հայտնելը պայմանավորված է եղել այն բանով, որ այդ ընթացքում իր երեխան նույն տեղանքում ընկել և լացում էր, որից ենթադրել է, որ երեխան է հրել Տեսախցիկը:

5/ Համաձայն վկա Համլետ Հարությունյանի՝ դատաքննության ժամանակ տված ցուցմունքի՝ դեպքի պահին ինքը նստած է եղել այնպիսի դիրքում, որտեղից երևացել է տեղադրված Տեսախցիկը, անձամբ չի տեսել վերջինիս ընկնելու պահը, սակայն հիշում է, որ երբ երեխան ընկել է, Տեսախցիկն ընկած է եղել գետնին, իսկ այն տեղադրված է եղել մի այնպիսի տեղ, որտեղ չէր բացառվում դրան հրելը:

6/ Պատասխանողը դեպքից անմիջապես հետո խոստացել է որոշ չափով վերականգնել վնասը /Հայցվորին ճանապարհածախս, վնասված Տեսախցիկը փորձաքննության տանելու առաջարկները/:

4.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, այն է՝ ստորադաս դատարանի կողմից ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-44-րդ, 49-րդ հոդվածների խախտման հետևանքով առկա է առերևույթ դատական սխալ, որը կարող էր ազդել գործի էլքի վրա և որի առկայությունը հիմնավորվում է ստորև ներկայացվող պատճառաբանություններով:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի /այսուհետ, նաև՝ Օրենսգիրք/ 14-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է նաև վնասները հատուցելու եղանակով:

Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ: Դրան համապատասխան, նշված հոդվածի նույն մասի 6-րդ կետը սահմանում է, որ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են այլ անձին վնաս պատճառելու հետևանքով:

Օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ

օրենքով կամ պայմանագրով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որը նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը /իրական վնաս/, չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր /բաց թողնված օգուտ/, ինչպես նաև ոչ նյութական վնասը:

Օրենսգրքի 1061-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից: Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել:

Օրենսգրքի 1070-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 14 տարեկան չդարձած անչափահասի /փոքրահասակի/ պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում նրա ծնողները, որդեգրողները կամ խնամակալը, եթե չեն ապացուցում, որ վնասն անչափահասի /փոքրահասակի/ մեղքով չի պատճառվել:

Վկայակոչված նյութական նորմերի վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների և ոչ օրինաչափ գործողության կամ անգործության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման:

Վնասը քաղաքացիական շրջանառության մասնակցի՝ օրենքով պահպանվող իրավունքների խախտման դեպքում վրա հասնող անբարենպաստ, բացասական հետևանքն է: Վերը վկայակոչված՝ Օրենսգրքի 17-րդ հոդվածից հետևում է, որ վնասը կարող է արտահայտվել ինչպես չնախատեսված լրացուցիչ ծախսեր կատարելով, կամ այդպիսի ծախսերի անհրաժեշտությամբ, այնպես էլ՝ գույքի կորստով կամ վնասվածքով:

Հակաիրավական, ոչ օրինաչափ վարքագիծն այն գործողությունը կամ անգործությունն է, որը խախտում է օրենքի, այլ իրավական ակտերի պահանջները, ինչպես նաև անձի սուբյեկտիվ իրավունքը: Գործողությունն անձի նպատակաուղղված, կամային արարքն է, իսկ անգործությունն արտահայտվում է անհրաժեշտ և պարտադիր վարքագիծ դրսևորելուց ձեռնպահ մնալով:

Ոչ օրինաչափ վարքագծի և վնասի միջև պատճառահետևանքային կապը ենթադրում է, որ վնասը պետք է հանդիսանա ոչ օրինաչափ վարքագծի ուղղակի, անմիջական հետևանք: Բոլոր այն դեպքերում, երբ վնասն անհրաժեշտաբար թելադրված չէ ոչ օրինաչափ գործողությամբ կամ անգործությամբ, և վնասի միջև կապն անուղղակի է, վնասի հատուցման համար անհրաժեշտ պատճառահետևանքային կապի պայմանը բացակայում է:

Վնաս պատճառող անձի մեղքը նրա սուբյեկտիվ վերաբերմունքն է իր ոչ օրինաչափ գործողության կամ անգործության և առաջացած հետևանքի՝ վնասի նկատմամբ, ինչը կարող է դրսևորվել ինչպես դիտավորության, այնպես էլ անզգուշության ձևով: Պետք է նկատել, որ վնասի հատուցման հարաբերություններում գործում է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի դեռ վերջինս չի ապացուցել վնաս պատճառելու հարցում իր մեղքի բացակայությունը:

Գերագույն դատարանը հարկ է համարում քննարկել վնասի պատճառման հարցում անձի մեղքի առկայության կամ բացակայության հարցը՝ ենթադրաբար վնաս պատճառած անձի կողմից հնարավոր

բացասական հետևանքների՝ վնասի նախականիմանն ուղղված որոշակի գործողությունների կատարման, հարթման կամ չընդունման համատեքստում: Պետք է ընդգծել, որ քաղաքացիաիրավական հարաբերություններում մեղքն արտահայտվում է անձի վերաբերմունքով ոչ միայն իր արարքի, այլև դրա հետևանքների նկատմամբ: Մա նշանակում է, որ գուտ հակաիրավական արարք թույլ տալու փաստը դեռևս չի վկայում անձի մոտ մեղքի առկայության մասին, ուստի դատարանները նշված հանգամանքը գնահատելիս նաև պետք է պարզեն այդպիսի արարք թույլ տված անձի վերաբերմունքը հնարավոր բացասական հետևանքների նկատմամբ:

Եթե դիտավորության դեպքում վնաս պատճառած անձը ցանկանում է կամ անտարբերությամբ է թույլ տալիս իր հակաիրավական արարքի հետևանքների առաջացումը, ապա անզգուշության պարագայում անձը՝ մի դեպքում կանխատեսելով իր վարքի բացասական հետևանքները, առանց բավարար հիմքերի կարծում է, թե դրանք կկանխվեն, մյուս դեպքում՝ ընդհանրապես չի կանխատեսում իր արարքի հետևանքները, չնայած պարտավոր էր կանխատեսել:

Նշված համատեքստում, Գերագույն դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ անձը հակաիրավական գործողությունների կատարումից կամ անգործության դրսևորումից հետո, մինչև բացասական հետևանքների վրա հասնելը, պատշաճ կերպով չի ձեռնարկում պատճառվելիք վնասը կանխելու ուղղությամբ օբյեկտիվորեն հնարավոր, անհրաժեշտ և իրենից կախված բոլոր միջոցները, ապա տվյալ իրավիճակում կարող է հավաստվել ենթադրաբար վնաս պատճառած անձի մեղավորությունը: Հետևաբար, ենթադրյալ վնաս պատճառած անձի կողմից չձեռնարկված համապատասխան միջոցների վերաբերյալ ապացույցների առկայությունը կարող է հիմք հանդիսանալ տվյալ անձին պատճառված վնասի հատուցման համար: Միաժամանակ, պետք է ընդգծել, որ վնասի հատուցման հարցը քննարկելիս գնահատման ենթակա է ոչ միայն վնաս պատճառած անձի մեղքը, այլև՝ տուժողի մեղքը՝ նկատի ունենալով, որ օրենսդիրը, կարևորելով տուժողի մեղքի ձևը, ամրագրել է վնաս պատճառած անձին պատասխանատվությունից ազատելու կամ նրա պատասխանատվությունը նվազեցնելու հնարավորություն:

Մասնավորապես՝ Օրենսգրքի 1081-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե տուժողի կողմից անզգուշությունը նպաստել է վնասի առաջացմանը կամ մեծացմանը, հատուցման չափը պետք է նվազեցվի՝ կախված տուժողի և վնաս պատճառած անձի մեղքի աստիճանից: Տուժողի կողմից անզգուշության առկայության և վնաս պատճառողի մեղքի բացակայության այն դեպքերում, երբ պատասխանատվությունը վրա է հասնում մեղքից անկախ, հատուցման չափը կարող է նվազեցվել կամ վնասի հատուցումը կարող է մերժվել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

Սույն գործով Առաջին ատյանի դատարանն ապացուցված համարելով այն փաստը, որ Հայցվորի Տեսախցիկին վնասը պատճառվել է Պատասխանողի անչափահաս որդու կողմից, հայցը բավարարել է մասնակիորեն: Վերաքննիչ դատարանը Պատասխանողի վերաքննիչ բողոքի բավարարման հիմքում դրել է այն պատճառաբանությունը, որ Առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցներն ինչպես առանձին, այնպես էլ իրենց համակցության մեջ, հնարավորություն չեն տալիս հաստատված համարելու Պատասխանողի անչափահաս որդու ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում Հայցվորի Տեսախցիկին վնաս պատճառած լինելու փաստը:

Ուստի, քննարկվող բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը. Արդյոք Հայցվորի, Պատասխանողի և վկայի՝ դատաքննության ընթացքում տված ցուցմունքներն իրենց համակցությամբ բավարար տվյալներ են պարունակում ապացուցված համարելու այն փաստը, որ Հայցվորին

պատկանող Տեսախցիկին վնասը պատճառվել է Պատասխանողի անչափահաս որդու ոչ իրավաչափ վարքագծի արդյունքում, թե ոչ:

Նշված հարցին պատասխանելու համար Գերագույն դատարանը հարկ է համարում վերլուծել դատական ապացույցներին վերաբերվող մի շարք քաղաքացիադատավարական նորմեր:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի /այսուհետ, նաև՝ Դատավարության օրենսգիրք/ 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Իսկ 6-րդ մասի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Քննարկվող իրավանորմերի պարագայում օրենսդրի կողմից ամրագրվել է վնաս պատճառած անձի մեղավորության կանխավարկածը, քանի որ ենթադրյալ վնաս պատճառած անձն է կրում իր մեղքի բացակայության ապացուցման պարտականությունը, որի ապացուցումն էլ վնաս պատճառած անձին ազատում է այն հատուցելուց:

Ըստ այդմ՝ Գերագույն դատարանը գտնում է, որ Դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի հիմքով վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից իրական վնասի, Պատասխանողի մոտ ոչ օրինաչափ վարքագծի առկայության, վնասների ու ենթադրյալ վնաս պատճառած անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության հանգամանքների ապացուցման բեռը կրում է հայցվոր կողմը, իսկ Հայցվորի կրած վնասի հարցում իր մեղքի բացակայության հանգամանքի ապացուցման պարտականությունը, քաղաքացիական օրենսգրքի կանխավարկածի հիմքով, կրում է ենթադրյալ վնաս պատճառած կողմը՝ պատասխանողը:

Գերագույն դատարանը փաստում է, որ նշված՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը, ընդհանուր կանոնը կիրառելի է բոլոր այն դեպքերում, քանի դեռ դատավարական կամ նյութական իրավունքի նորմերով որոշակի փաստի հաստատման վերաբերյալ հատուկ կանոն սահմանված չէ:

Ելնելով վերոգրյալ իրավանորմերի պահանջներից և հաշվի առնելով ներկայացված հայցադիմումի հիմքն ու վճռաբեկ բողոքի փաստարկները, Գերագույն դատարանն արձանագրում է, որ հայցադիմումի հիմքում դրված են Պատասխանողի անչափահաս որդու կողմից որոշակի գործողությունների կատարման արդյունքում Հայցվորի գույքին վնաս պատճառելու և պատճառված վնասը հատուցման ենթակա լինելու փաստերը, այլ կերպ՝ դելիկտային պարտավորությունները:

Դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ Դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Վկայակոչված իրավանորմի կարգավորումից ակնհայտ է, որ ապացույցների գնահատման հարցում դատարանի «ներքին համոզմունքը» վերացական հասկացություն չէ և չի կարող դրսևորվել սուբյեկտիվ մոտեցմամբ, այլ այն պետք է հստակ հիմնված լինի գործում առկա բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա: Այսինքն, այս կամ այն փաստի առկայության կամ բացակայության մասին

դատարանի եզրահանգումը պետք է լինի գործով ձեռք բերված բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության տրամաբանական հետևությունը՝ հաշվի առնելով դրանց համակցությունը և փոխադարձ կապը, կիրառման ենթակա իրավունքը: Դատարանը յուրաքանչյուր ապացույց բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտելու դեպքում պետք է հաշվի առնի, թե որքանով է այդ ապացույցը վերաբերելի և թույլատրելի տվյալ փաստական հանգամանքը հաստատելու կամ մերժելու համար:

Ընդ որում, որևէ ապացույցի թույլատրելիության հարցը լուծելիս Գերագույն դատարանը հիմք է ընդունում վկայակոչված նորմերի պահանջներից բխող հետևյալ կանոնները.

- գործի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը կարող է հաստատվել բացառապես օրենքով նախատեսված ապացույցներով,

- հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցներն իրավաբանական ուժ չունեն և չեն կարող դրվել դատարանի վճռի հիմքում:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ վերոնշյալ կանոնի համատեքստում ապացույցի թույլատրելիությունը պետք է դիտարկվի ոչ միայն դատավարական, այլ նաև նյութաիրավական օրենսդրության նորմերը պահպանված լինելու առումով:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը, Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունի Հայցվորի կողմից նշված և վճռաբեկ բողոքում վիճարկվող ապացուցման ենթակա այն փաստը, որ Պատասխանողի անչափահաս որդու ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում Հայցվորին պատճառվել է հայցագնի չափով գույքային վնաս:

Դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործով ապացույցներ են նույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված կարգով ձեռք բերված տեղեկությունները, որոնց հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները հիմնավորող, ինչպես նաև վեճի լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը:

Օրենսդիրն ապացույցների շարքին է դասում նաև գործին մասնակցող անձանց, վկաների ցուցմունքները, փորձագետի եզրակացությունը, գրավոր և իրեղեն ապացույցները:

Գերագույն դատարանը նախկինում կայացրած՝ ԸԴԴ/1715/02/11, ԸԴԴ/0796/02/12/, ԸԴԴ/0158/02/16 քաղաքացիական գործերով համապատասխանաբար՝ 20.12.2012, 04.06.2013, 03.04.2017 թվականների որոշումներով անդրադառնալով գործով օրինական և հիմնավորված վճիռ կայացնելու նպատակով գործի համար էական նշանակություն ունեցող բոլոր ապացույցներն իրենց համակցության մեջ քննարկելու, գործում առկա ապացույցները մեկը մյուսի հետ համադրման արդյունքում ստուգելու և գործի համար դրանց կարևորությունը պարզելու մասին, հարցերին արձանագրել է. «Դատարանը յուրաքանչյուր ապացույց հետազոտում է, նախ՝ գործին դրա վերաբերելիության, օրենքով նման ապացույցի թույլատրելիության, արժանահավատության, իսկ վերաբերելի բոլոր ապացույցները միասին՝ որոշակի փաստ (փաստեր) հաստատելու համար բավարարության տեսանկյունից: Դատարանը յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը ստուգելուց հետո պարտավոր է ստուգել նաև տվյալ ապացույցի արժանահավատությունը և ապացույցների միջև հակասության դեպքում մերժել իր կարծիքով ոչ արժանահավատ ապացույցը՝ հիմնավորելով տվյալ մերժումը, իսկ փաստը՝ հաստատել արժանահավատ ապացույցի հիման վրա: Ապացույցի գնահատումն ապացույցների տրամաբանական և իրավաբանական որակումն է՝ դրանց վերաբերելիության,

թույլատրելիության, արժանահավատության և բավարարության տեսանկյունից: Ընդ որում, ապացույցների բավարարությունը գործով ձեռք բերված ապացույցների այնպիսի համակցությունն է, որը հնարավորություն է տալիս վերջնական եզրահանգում կատարել որոնվող փաստերի առկայության կամ բացակայության վերաբերյալ: Ապացույցների գնահատումը բավարարության տեսանկյունից հետապնդում է ապացույցների միջև հակասությունները վերացնելու նպատակ, այնպես, որ փարատվեն ստացված ամբողջ ապացուցողական զանգվածից կատարված հետևությունների ճշմարտացիության վերաբերյալ կասկածները:», (ԸԲԴ/1715/02/11, 20.12.2012թ.):

«(...) Դատարանը պետք է գործի բոլոր հանգամանքները քննարկի համակցության մեջ, ապացույցները ստուգի մեկը մյուսի հետ համեմատելով և դրանց միջև հակասություններ նկատելու դեպքում՝ պարզի այդ հակասությունների էությունը, գործի համար կարևորությունը՝ օրինական և հիմնավորված վճիռ կայացնելու համար (...)» ԸԲԴ/0796/02/12, 04.06.2013թ:

«(...) գործով ապացույցները ներկայացնում են գործին մասնակցող անձինք, եթե գործին մասնակցող անձը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույց ինքնուրույն ձեռք բերել, նա իրավունք ունի այդ ապացույցը ձեռք բերելու համար դիմել դատարան, ապացույցների հետազոտումը դատական ապացույցների անմիջական ընկալումն է, մեկ ապացույցը մյուս ապացույցների միջոցով ստուգելը, ներկայացված ապացույցների միջև եղած հակասությունները վեր հանելը և վերացնելը, որի արդյունքում դատարանը պետք է գնահատի յուրաքանչյուր ապացույցի վերաբերելիությունը և թույլատրելիությունը և գնահատի ապացույցները արժանահավատության և բավարարության տեսակետից: /.../ Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ դատական ապացուցման նպատակը գործի իրական հանգամանքների, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության հաստատումն է», (ԸԲԴ/0158/02/16թ., 03.04.2017թ.):

Վերոգրյալ վերլուծությունների և Գերագույն դատարանի կողմից նախկինում արտահայտված դիրքորոշումների արդյունքում, Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանի կողմից իրավացիորեն Հայցվորի, Պատասխանողի և վկայի կողմից տրված ցուցմունքներով հիմնավորվում է, որ Հայցվորի Տեսախցիկին վնասը պատճառվել է Պատասխանողի անչափահաս որդու ոչ օրինաչափ, անզգույշ վարքագծի արդյունքում: Այն փաստը, որ Հայցվորի գույքին պատճառված վնասն առաջացել է Պատասխանողի անչափահաս որդու անզգույշ գործողության արդյունքում, հիմնավորվում է Պատասխանողի գործողություններով՝ դեպքից անմիջապես հետո /վնասի մի մասը փոխահատուցելու, ճանապարհածախս առաջարկելու, վնասված տեսախցիկը փորձաքննության տանելու առաջարկները Հայցվորին/:

Վերոգրյալի հաշվառմամբ, Գերագույն դատարանը գտնում է, որ Հայցվորն Օրենսգրքի 44-րդ հոդվածի հիմքով, սույն գործով ենթակա վնասի հատուցման համար պարտադիր պայման հանդիսացող տարրերից՝ Պատասխանողի անչափահաս որդու ոչ օրինաչափ վարքագծի, վնասների ու ենթադրյալ վնաս պատճառած անձի ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի առկայության փաստն ապացուցել է, իսկ Հայցվորի կրած գույքային վնասի հարցում իր մեղքի բացակայությունը Պատասխանողը չի ապացուցել:

Միաժամանակ, Գերագույն դատարանը փաստում է, որ պատճառված վնասում իր մեղքի բաժինն ունի նաև Հայցվորը, որը պարտավոր էր առանց հսկողության չթողնել իրեն պատկանող գույքը՝ Տեսախցիկը: Հետևաբար, Օրենսգրքի վերը վկայակոչված նորմերի, մասնավորապես Օրենսգրքի 1081-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ, պետք է նվազեցնել պատճառված վնասի չափը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելու և փոփոխելու լիազորությունը, այն է՝ հայցը բավարարել 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Գերագույն դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է Կոնվենցիայի վերագրյալ հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևաբար, գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատական ակտը փոփոխելիս Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5.Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետին, վկային կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում գնելու, փաստաբանի խելամիտ վարձատրության և գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարներից:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն քաղաքացիական գործով դատական ծախսերը բաղկացած են պետական տուրքի և կողմերի՝ փաստաբաններին վճարման ենթակա խելամիտ վարձատրության հանրագումարից: Ընդ որում, հայցադիմումի, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար նախատեսված պետական տուրքի գումարից չի վճարվել 27.627 (քսանյոթ հազար վեց հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ՝ Պատասխանողի կողմից վերաքննիչ բողոքի ներկայացման համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն, գործին մասնակցող անձանց միջև դատական ծախսերի բաշխման մասին համաձայնության դեպքում դատարանը վճիռ է կայացնում դրան համապատասխան, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք բերելու հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն հոդվածի կանոններին համապատասխան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված վճռաբեկ բողոքը, ինչպես նաև՝ հայցապահանջը ենթակա են բավարարման մասնակիորեն, Գերագույն դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հատուցման պարտավորություն պետք է կրեն և՛ Հայցվորը, և՛ Պատասխանողը՝ բավարարված հայցապահանջին համամասնորեն: Ըստ այդմ, Գերագույն

դատարանը գտնում է, որ Հայցվորի և Պատասխանողի կողմից արդեն իսկ Վճարված պետական տուրքի և նրանց փաստաբանների խելամիտ վարձատրության գումարները պետք է հաշվանցել, իսկ չվճարված 27.627 (քսանյոթ հազար վեց հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ պետական տուրքի գումարից համապատասխանաբար՝ 15.637 (տասնհինգ հազար վեց հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ և 11.990 (տասնմեկ հազար ինը հարյուր իննսուն) ՀՀ դրամ գումարը պետք է բռնագանձել Հայցվորից և Պատասխանողից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և 256-րդ հոդվածի 1-ին մասով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Մասնակիորեն բեկանել ԸԲԴ/0004/02/19 քաղաքացիական գործով Արցախի Հանրապետության վերաքննիչ դատարանի 2020 թվականի մայիսի 06-ի որոշումը և այն փոփոխել. Արթուր Վյաչեսլավի Բաբայանի հայցը բավարարել մասնակիորեն. անչափահաս Հարութ Վաչագան Բաբայանի օրինական ներկայացուցիչ Վաչագան Զոհրաբի Բաբայանից հոգուտ Արթուր Վյաչեսլավի Բաբայանի բռնագանձել 800.000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Արթուր Վյաչեսլավի Բաբայանից և Վաչագան Զոհրաբի Բաբայանից հոգուտ Արցախի Հանրապետության բռնագանձել համապատասխանաբար՝ 15.637 (տասնհինգ հազար վեց հարյուր երեսունյոթ) ՀՀ դրամ և 11.990 (տասնմեկ հազար ինը հարյուր իննսուն) ՀՀ դրամ, որպես վերաքննիչ բողոքի համար նախատեսված և չվճարված պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն
ստորագրություն

**Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հ.ԽԱՉԱՏՏՅԱՆ
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Կ.ՂԱՐԱՅԱՆ**